ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- Բանկի առաքելությունը և արժեքները 1
- Յունիբանկի առաջնահերթությունները 2
- ՀՀ բանկային համակարգը. հիմնական ցուցանիշները 3
- 2018 թվականի կարևորագույն իրադարձությունները 6
- Հիմնական ֆինանսական ցուցանիշները 7
- Վարկային պորտֆել 9
- Ավանդային պորտֆել 12
- Մանրածախ բիզնես 13
- Կորպորատիվ բիզնես 15
- Զարգացման ռազմավարական հիմնական ուղղությունները 19
- Ռազմավարական նպատակներ 21
- Ներդրողների եվ միջազգային կառույցների հետ աշխատանքը 22
- Մեր թիմը 25
- Կորպորատիվ կառավարում 29
- Անձնակազմի կառավարում և կադրային քաղաքականություն 33
- Միջազգային վարկանիշ 34

ԲԱՆԿԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐԺԵՔՆԵՐԸ

Յունիբանկը դինամիկ զարգացող ինովացիոն բանկ է, որն իր հաճախորդներին տրամադրում է մանրածախ և կորպորատիվ բանկային ծառայությունների լայն տեսականի:

Բանկն իր առաքելությունն է համարում նպաստել Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացմանը, իր հաճախորդների, բաժնետերերի և գործընկերների ֆինանսական վիճակի բարելավմանը, ինչպես նաև՝ որակյալ ֆինանսական ծառայությունների նկատմամբ հասարակության պահանջարկի բավարարմանը:

ՄԵՐ ԱՐԺԵՔՆԵՐԸ

- ուշադիր և ազնիվ վերաբերմունք հաճախորդների նկատմամբ
- ուժեղ թիմ և արդյունքին նպատակաուղղվածություն
- հասարակության վստահություն
- ապրանքանիշի բարձր ճանաչելիություն և հեղինակություն
- հուսալիություն և կայունություն

ՄԵՆՔ ԶԳՏՈՒՄ ԵՆՔ

- ամրապնդել և ընդլայնել բանկի դիրքերը ֆինանսական շուկայում
- ապահովել ծառայությունների մատուցման բարձր որակ և կատարելագործել սպասարկման գործընթացը
- բարձրացնել պահանջված բանկային ծառայությունների հասանելիության մակարդակը
- ներդնել բիզնեսի վարման թափանցիկ մոդելի և կորպորատիվ կառավարման լավագույն փորձը
- բարձրացնել բանկի ներդրումային գրավչությունը

«Նորմալ վիճակը դա ասֆալտեպատ ճանապարհն է
նրանով հեշտ է շարժվել, բայց ծաղիկներ նրա վրա չեն աճում»

Վինսենտ Վան Գոգ

ՅՈՒՆԻԲԱՆԿԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- **Հաճախորդամետ մոտեցում**
  Մրցակցային առավելության պահպանում՝ ինովացիոն որոշումների և ինֆորմացիոն տեխնոլոգիաների խնդիրների առաջքաշմամբ

- **Պրոֆեսիոնալ թիմ և մոտիվացված անձնակազմ**
  Բանկի անձնակազմը դա ակտիվ է և Բանկի հաջողությունը անհնար է առանց գործնական ձեռքբերումների և յուրաքանչյուր աշխատակցի նկատմամբ լոյալ վերաբերմունք դրսևորելուց

- **Առաջադեմ բանկային տեխնոլոգիաների կիրառում**
  Քայլ առաջ իր հիմնական մրցակիցներից

- **Ֆինանսական արդյունքներ**
  Շահույթի ապահովում՝ ծախսերի օպտիմալացմամբ, ռիսկի և եկամտի հարաբերակցության պահպանում

- **Կորպորատիվ կառավարում**
  Ուժեղ, թափանցիկ և արդար կորպորատիվ մշակույթի ձևավորում ի շահ բաժնետերերի

- **Կորպորատիվ և սոցիալական պատասխանատվություն**
  Բանկը հանդիսանում է իր երկրի քաղաքացին և պարտավոր է իր ավանդն ունենալ հասարակության զարգացման մեջ

ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ. ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Հայաստանյան բանկային համակարգի համախառն ակտիվները 2018թ.-ին կազմել են 4,958 մլրդ ՀՀ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 15%-ով: (4 324 մլրդ ՀՀ դրամ) Բանկերի ակտիվների աճի տեմպերն արտացոլում են վարկավորման ծավալների աճը: Համակարգի վարկային ներդրումների ընդհանուր ծավալը 2018թ.-ի արդյունքներով կազմել է ավելի քան 3,061 մլրդ ՀՀ դրամ՝ աճելով 15%-ով 2017թ.-ի նույն ցուցանիշի նկատմամբ:

Բանկերի պարտավորությունները հաշվետու տարում աճել են 15%-ով կազմելով 4,193 մլրդ ՀՀ դրամ: Համախառն ավանդների ծավալը 2018թ.-ի դեկտեմբերի վերջի դրությամբ կազմել է 2,813 մլրդ ՀՀ դրամ, ինչը 10%-ով կամ 267 մլրդ դրամով ավելի է 2017թ.-ի դեկտեմբերի ցուցանիշից:

ՀՀ բանկային համակարգի շահույթը 2018թ.-ին կազմել է 62.2 մլրդ ՀՀ դրամ: Հաշվետու տարում տնտեսական աճը Հայաստանում կազմել է 5.2%, ՀՆԱ-ն՝ 6,005 մլրդ ՀՀ դրամ կամ 12,4 մլրդ ԱՄՆ դոլար: Մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն կազմել է 2 025 246 ՀՀ դրամ՝ նախորդ տարվա 1 871 865 ՀՀ դրամի դիմաց:

ՀՆԱ-ում բանկային ակտիվները 2017թ.-ի արդյունքներով կազմել են 83%, իսկ վարկային ներդրումները՝ 51%, նախորդ տարվա 78% և 48% դիմաց:

ԱՃԻ ՄԻՏՈՒՄԸ

/2010-2018ԹԹ./

ԱԿՏԻՎՆԵՐ

318%

ԿԱՊԻՏԱԼ

223%

ՎԱՐԿԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ

323%


6.500.000
6.000.000
5.500.000
5.000.000
4.500.000
4.000.000
3.500.000
3.000.000
2.500.000
2.000.000
1.500.000
1.000.000
500.000
2010
2011
2012
2013
2014
2015
2016
2017
2018
ՀՆԱ
ԱԿՏԻՎՆԵՐ
ՎԱՐԿԵՐ
ԱՎԱՆԴՆԵՐ

2018 ԹՎԱԿԱՆԻ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝

- Յունիբանկը և Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալությունը ստորագրել են պայմանագիր
- Յունիբանկը սոցիալական պատասխանատվության շրջանակներում ֆինանսավորման ծրագիր է գործարկել իրականացնելով դպրոցների բարեկարգման և վերազինման աշխատանքներ
- Յունիբանկը և FMO- ն հաստատել են համագործակցություն “Women in Business” վարկային ծրագրի շրջանակներում
- «Յունիբանկ» -ը պարտատոմսերի 5 թողարկում է կատարել՝ տեղաբաշխելով 1 250 մլրդ դրամ և 10 մլն ԱՄՆ դոլար արժողությամբ պարտատոմսեր:
- Յունիբանկ Privé -ն ստացավ SPEAR’S Russia Wealth Management Awards-ի 2018 մրցանակը ԱՊՀ երկրներում մասնավոր բանկային ծառայությունների լավագույն հաճախորդների սպասարկման համար
- Խորհրդի կազմում ընդգրկվեցին ևս 2 հոգի Վարդան Աթայան և Արտեմ Կոնստանդյան:

«Առանց հայրենիք, առան սիրո և հայրենի հողի
մարդ չի կարող գտնել իր հոգին»

Մարտիրոս Սարյան

UNIBANK

2018 ԹՎԱԿԱՆԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ՅՈՒՆԻԲԱՆԿՆ ԱՊԱՀՈՎԵԼ Է ՀԵՏԵՎՅԱԼ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

ԱԿՏԻՎՆԵՐ

209.800

մլն ՀՀ դրամ

ՎԱՐԿԵՐ

134.279

մլն ՀՀ դրամ

ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐ

8.576

մլն ՀՀ դրամ

ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

177.251

մլն ՀՀ դրամ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՊԻՏԱԼ

32.548

մլն ՀՀ դրամ

2018 թ. «Յունիբանկը»
ամփոփեց հետեւյալ ցուցանիշներով՝

Յունիբանկ ԲԲԸ-ի ակտիվները (մլն ՀՀ դրամ)

Յունիբանկ ԲԲԸ-ի պարտավորությունները (մլն ՀՀ դրամ)



Յունիբանկ ԲԲԸ-ի կապիտալը (մլն ՀՀ դրամ)



ՎԱՐԿԱՅԻՆ ՊՈՐՏՖԵԼ

Բանկի ընդհանուր վարկային ներդրումներն առ 31.12.2018թ. կազմել են ընդհանուր ակտիվների 64%-ը: Դրամային վարկային պորտֆելը կազմել է ընդհանուր վարկային պորտֆելի 54%-ը: Վարկավորման միջին տոկոսադրույքը կազմել է տարեկան 10.82%:

Վարկային պորտֆելի արժութային կառուցվածքը

- ՀՀ դրամ
- Ազատ փոխարկելի արժույթ
- Ոչ փոխարկելի արժույթ



Բանկի վարկային պորտֆելի կառուցվածքը

- Մանրածախ բիզնես
- ՓՄՁ վարկավորում



ԱՎԱՆԴԱՅԻՆ ՊՈՐՏՖԵԼ

Ժամկետային ավանդների պորտֆելը հաշվետու տարվա վերջում կազմել է 108.3 մլրդ դրամ: Վերջինիս կառուցվածքում գերակշռում են բնակչությունից ներգրավված միջոցները՝ 87.8 մլրդ դրամ կամ պորտֆելի 81%-ը: Ցպահանջ ավանդները 2018թ. ընթացքում ավելացել են 25.2 մլրդ դրամով և կազմել են 43.2 մլրդ դրամ, որից 31.7 մլրդ դրամը՝ բաժին է ընկել իրավաբանական անձանց, 11.5 մլրդ դրամը անհատներից :

Ընդհանուր պարտավորությունների ֆոնդավորման արժեքը նվազել է 1.9%-ով:

Ներգրավված միջոցների կառուցվածքը

- Պարտավորություններ ֆիզիկական կազմակերպությունների նկատմամբ
- Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ
- Փոխառություններ
- Թողարկված պարտքային արժեթղթեր
- Այլ պարտավուրություններ



Ժամկետային ավանդներ

- Իրավաբանական անձինք
- Ֆիզիկական անձինք



ՄԱՆՐԱԾԱԽ ԲԻԶՆԵՍ

Յունիբանկն արձանագրել է ցուցանիշների զգալի աճ ֆիզիկական անձ հաճախորդներին մատուցվող ծառայությունների բոլոր սեգմենտներում: Մանրածախ վարկերի մասնաբաժինը ընդհանուր վարկային պորտֆելում կազմել է 52%, կամ 77.6 մլրդ դրամ: 2018թ. Յունիբանկի կողմից տրամադրված մանրածախ վարկերի ծավալը 14%-ով գերազանցել է 2017թ. արդյունքը՝ գլխավորապես վաճառքների մոդելի փոփոխման և պորտֆելի կառավարիչների խմբի ձևավորման շնորհիվ:

2018թ. Բանկը վերահաստատել է հիփոթեքային վարկավորման պետական ծրագրերում ակտիվ մասնակցի կարգավիճակը: Հաշվետու տարում Յունիբանկի կողմից տրամադրվել է 3.35 մլրդ դրամի թվով 188 հիփոթեքային վարկ, որից 80 մլն դրամի թվով 10 վարկ տրամադրվել է §Ազգային հիփոթեքային ընկերության¦ ծրագրի, իսկ 101 մլն դրամի թվով 10 վարկ՝ §Բնակարան երիտասարդներին¦ ծրագրի շրջանակներում:
2018թ. մանրածախ վարկային պորտֆելի միջին կշռված անվանական տոկոսադրույքը կազմել է 13.6%, նվազելով 3.2 տոկոսային կետով:

POS վարկավորման գծով բանկը համագործակցել է ավելի քան 220 կազմակերպությունների հետ, որոնց հետ համագործակցության շրջանակներում Բանկն իր ծառայությունները ներկայացնում է ավելի քան 630 վաճառասրահներում:

«Արվեստը քո մտքերի շրջագիծն է»

Գուստավ Կլիմտ

Մանրածախ վարկավորման բարձր ցուցանիշները 2018 թվականին ապահովվել են հետևյալ միջոցառումների շնորհիվ.

- Ընդլայնվել է պրոմո-կետերի ցանցը՝ հասնելով մինչև 80-ի, որոնց միջոցով տրամադրվել է 14.8 մլրդ ՀՀ դրամ ընդհանուր գումարի:
- Ավելացել է ոսկու գրավով վարկեր տրամադրող մասնաճյուղերի քանակը՝ 17-ից հասնելով մինչև 27-ի
- ակտիվորեն գովազդվել է վարկային օնլայն հայտերի ընդունման հնարավորությունը: 2018թ-ին օնլայն ստացված հայտերի քանակը կազմել է 20 510, գումարը՝ 10.7 մլրդ. ՀՀ դրամ, որից հաստատվել է 1.9 մլրդ ՀՀ դրամ ընդհանուր գումարով 5 535 վարկ:

Մանրածախ վարկերի շարժ (մլն ՀՀ դրամ)



ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԲԻԶՆԵՍ

2018թ. Յունիբանկը որպես ռազմավարական ուղղություն, շարունակել է աշխատանքները փոքր և միջին ձեռնարկությունների համար վարկային միջոցների հասանելությունը բարձրացնելու ուղղությամբ:

Կորպորատիվ վարկավորման բիզնես մոդելում տեղի են ունեցել էական բարեփոխումներ, որոնց արդյունքում Բանկը կենտրոնացել է միկրո և փոքր բիզնեսի զարգացման, ինչպես նաև նիշային հաճախորդների համար նոր գործիքակազմի մշակման վրա, ավտոմատացրել է անգրավ միկրովարկերի տրամադրման գործընթացը՝ 'Պրոտոբեյզ Լաբորատորիզ' ընկերության նորագույն CRM համակարգի ներդրմամբ:

Բիզնես վարկերի մասնաբաժինը ընդհանուր վարկային պորտֆելում կազմել է 48%, կամ 70.7 մլրդ դրամ, որի 42%-ը կազմում են ՓՄՁ վարկերը:
Բիզնես վարկերի պորտֆելի միջինկշռված անվանական տոկոսադրույքը 2018թ. նվազել է 0.6 տոկոսային կետով և կազմել է 11.7%:

Բիզնես վարկերի պորտֆելի կառուցվածք

- ՓՄՁ վարկեր, 42%
- Կորպորատիվ վարկեր, 58%



ՓՄՁ վարկավորման և առևտրի ֆինանսավորման համար ռեսուրսներ

Black Sea Trade & Development Bank

IFC International Finance Corporation WORLD BANK GROUP

kfw

European Investment Bank The EU bank

FMO Entrepreneurial Development Bank

ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 2019-2021 թթ.

Հաստատված ռազմավարության շրջանակներում Յունիբանկը ձևավորել է 2019թ. առանցքային առաջնահերթությունները՝

- մանրածախ բանկինգի, ինչպես նաև փոքր և միջին ձեռնարկություններին մատուցվող ծառայությունների ծավալների մեծացում, բարձր եկամտաբերություն ապահովող սեգմենտների շեշտադրմամբ,
- բիզնես գործընթացների ավտոմատացում, դրանց արդյունավետության բարձրացում,
- պարտատոմսերի թողարկման ծրագրի ընդլայնում՝ Բանկի պարտավորությունների կառուցվածքում պարտատոմսերի տեսակարար կշռի մինչև 7% ավելացմամբ, արտասահմանյան շուկայում պարտատոմսերի գնանշում,
- ժամանակակից տեխնոլոգիաների եւ կառավարման մեթոդների ներդրումը, հաճախորդների՝ Բանկի ծառայություններով բավարարվածության մակարդակի և լոյալության բարձրացում,
- ֆինանսական արդյունավետության ապահովում և բանկային համակարգում Յունիբանկի դիրքի բարելավում

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱ ՆՊԱՏԱԿՆԵՐ 2019- 2021

ՖԻՆԱՆՍՆԵՐ

2020թ.-ին մինչև 10 մլն ԱՄՆ դոլլար շահույթի ապահովում

Բաժնետոմսերի շուկայական գնի աճ

ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

POS վարկավորման շուկայական մասնաբաժնի ավելացում մինչև 40%

Բիզնես վարկավորման շուկայական մասնաբաժնի ավելացում մինչև 10%

Ծառայությունների տեսականու ընդլայնում

ԲԻԶՆԵՍ ԳՈՐԾԸՆԹԱՑ

Հաճախորդների սպասարկման որակի բարելավում

ՓՄՁ վարկավորման ավտոմատացում

Հեռահար բանկինգի զարգացում

ԱՆՁՆԱԿԱԶՄՆ ՈՒ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Անձնակազմի որակավորման բարձրացում

Անձնակազմի լոյալության բարձրացումը

ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Կորպորատիվ կառավարման լավագույն ստանդարտների կիրառում

Լոյալ բաժնետերերի մեծ թիմի ձևավորում

ՆԵՐԴՐՈՂՆԵՐԻ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Համագործակցություն է հաստատվել Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալության հետ՝ փոքր և միջին ձեռնարկությունների արտահանմանը աջակցելու նպատակով:

Ֆինանսական միջոցների ներգրավման նպատակով համաձայնագիր է կնքվել հանրահայտ Նիդերլանդների զարգացման բանկի (FMO) հետ §Women in business¦ ծրագրի շրջանակներում 10 մլն դոլար ներգրավելու վերաբերյալ, որի համաձայն կանանց ձեռներեցներին տրամադրվել է մինչեւ կես միլիոն դոլար վարկ `տարեկան 10.5% -ով, մինչեւ 60 ամիս մարման ժամկետով:

Շարունակվել է համագործակցությունը Միջազգային ֆինանսական կորպորացիայի (IFC), Առևտրի և զարգացման Սևծովյան բանկի (BSTDB), Եվրոպական ներդրումային բանկի (EIB), Գյուղատնտեսական զարգացման միջազգային հիմնադրամի (IFAD), ՓՄՁ ՀԱԿ հիմնադրամի, ինչպես նաև KfW գերմանական բանկի հետ:
Յունիբանկը թողարկեց և հաջողությամբ տեղաբաշխեց 3 դրամային և 2 դոլարային անվանական արժեկտրոնային պարտատոմսեր՝ համապատասխանաբար 10% և 5.5% տարեկան եկամտաբերությամբ, 24 և 36 ամիս ժամկետայնությամբ: Թողարկման ընդհանուր ծավալը կազմել է 1,250 մլն դրամ և 10 մլն ԱՄՆ դոլար: Պարտատոմսերը ցուցակված են Հայաստանի ֆոնդային բորսայում:

ԲՈՐՍԱՅԻՆ ՇՈՒԿԱ

- ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՈՐՍԱ

- 1 ԲԱԺՆԵՏՈՄՍԻ ԱՐԺԵՔ 230 ՀՀ ԴՐԱՄ
- ՄԱՐՔԵԹ ՄԵՅՔԵՐ (ՇՈՒԿԱ ՍՏԵՂԾՈՂ) ARMENBROK

- 167 ԲԱԺՆԵՏԵՐ
- ՀԱՇՎԻ ՕՊԵՐԱՏՈՐ ՅՈՒՆԻԲԱՆԿ ԲԲԸ

ՄԵՐ ԹԻՄԸ
Բանկի Խորհուրդը

Գագիկ Զաքարյան
Խորհրդի նախագահ

Յունիբանկ» ԲԲԸ-ի Խորհրդի նախագահ, «Յունիստրիմ» ԲԲԸ-ի Տնօրենների խորհրդի նախագահ, Ռուսաստանի բանկերի միության խորհրդի անդամ, “Национальный Банковский Журнал” ամսագրի դիտող խորհրդի անդամ, Ֆինանսական պլանավորման ինստիտուտի պրեզիդիումի անդամ:
Գագիկ Զաքարյանը տարբեր տարիներին արժանացել է ֆինանսական աշխարհի մի շարք առաջատար մրցանակների, այդ թվում՝ «Լավագույն բանկիր» տիտղոսին 2005 և 2007 թվականներին: 2006 թվականին «Բիզնեսի սոցիալական պատասխանատվություն» անվանակարգում ճանաչվել է «Տարվա մարդ», իսկ 2007 թվականին բանկի արդյունավետ կառավարման համար դարձել է ՌԴ Ազգային բանկային մրցանակաբաշխության մրցանակակիր: 2008թ.-ին Գագիկ Զաքարյանն արժանացել է մրցանակի լավագույն ռուսաստանյան ապրանքանիշ ստեղծելու համար: Ռուսաստանում կայացած «Տարվա բանկ» ամենամյա մրցանակաբաշխությանը բանկային բիզնեսում ներդրած ավանդի համար ճանաչվել է «Տարվա բանկիր – 2013»: Պարգևատրվել է Հայ եկեղեցու բարձրագույն՝ «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով՝ ի գնահատություն ազգօգուտ և եկեղեցաշեն գործունեության: 2015 թվականին Գագիկ Զաքարյանը պարգևատրվել է «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 2-րդ աստիճանի մեդալով:
Արցախի Հանրապետությանը մատուցած ծառայությունների համար պարգևատրել է «Վաչագան Բարեպաշտ» մեդալով:

Գեորգի Պիսկով
Խորհրդի անդամ

«Յունիբանկ» ԲԲԸ-ի Խորհրդի անդամ, «Յունիստրիմե ԲԲԸ-ի Տնօրենների խորհրդի անդամ, «Պրոտոբեյզ Լաբարատորիզ» ՍՊԸ-ի Տնօրենների խորհրդի նախագահ, Ֆինանսական պլանավորման ինստիտուտի հիմնադիր և նախագահ: Իրականացրել է մի շարք հաջող ծրագրեր Ռուսաստանում և Մեծ Բրիտանիայում: Տնտեսագիտական գիտությունների թեկնածու: «Բանկային ոլորտում տարվա մենեջեր 2003», «Ֆինանսական օլիմպ 2009» մրցանակների դափնեկիր:

Էդուարդ Զամանյան
Խորհրդի անդամ

«Յունիստրիմ» ԲԲԸ-ի Տնօրենների Խորհրդի անդամ, «Յունիստրիմ» ԲԲԸ-ի Խորհրդի անդամ:
Ունի մեծ աշխատանքային փորձ բանկային համակարգում, զբաղեցրել է ղեկավար պաշտոններ մի շարք խոշոր ֆինանսական հաստատություններում:

Հրահատ Արզումանյան
Խորհրդի անդամ

«Տրանսստրոյբանկ»-ի Տնօրենների Խորհրդի նախագահ, «Յունիբանկ» ԲԲԸ-ի Խորհրդի անդամ:
Ունի աշխատանքային մեծ փորձ բանկային համակարգում: Պարգևատրվել է Ռուսաստանի բանկերի միության պատվոգրով՝ ռուսաստանյան բանկային համակարգում ունեցած ավանդի և բանկի հիմնադրման 20-ամյակի կապակցությամբ:

Դավիթ Փափազյան
Խորհրդի անդամ

Կապիտալի անկախ կառավարման անկախ մասնագետ:

Վարդան Աթայան
Խորհրդի անդամ

«Յունիբանկ» ԲԲԸ-ի բաժնետեր, «Յունիլիզինգ» ընկերության բաժնետեր և Խորհրդի նախագահ, «ՌԵՍՈ» ՓԲԸ-ի Խորհրդի անդամ.

Արտեմ Կոնստանդյան
Խորհրդի անդամ

Արտահանման և ներդրումների ապահովագրության ռուսական ЭКСАР գործակալություն, հոգաբարձուների ֆոնդի անդամ;

ԲԱՆԿԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆԸ

Մեսրոպ Հակոբյան
Վարչության նախագահ

Աշխատում է Յունիբանկում 2004թ.-ից, ունի ավելի քան 16 տարի աշխատանքային փորձ բանկային համակարգում:

Արարատ Ղուկասյան
Վարչության նախագահ
առաջին տեղակալ

Ունի մեծ աշխատանքային փորձ բանկային համակարգում, զբաղեցրել է ղեկավար պաշտոններ Հայաստանի, Ուկրաինայի և Մալթայի մի շարք խոշոր բանկերում: 2009-2011 թվականներին ղեկավարել է Հայաստանի բանկերի միությունը:

Գոհար Գրիգորյան
Վարչության անդամ

Ֆինանսական տնօրեն - գլխավոր հաշվապահ, «Յունիբանկ» ԲԲԸ-ի Վարչության անդամ , «Յունիլիզինգ» ՓԲԸ-ի Խորհրդի անդամ: Տեխնիկական գիտությունների թեկնածու: Բանկային համակարգում աշխատանքային փորձն ավելի քան 21 տարի: Մասնակցել է մի շարք միջազգային ծրագրերի հաշվապահական հաշվառման և հարկային օրենսդրության գծով:

Օվսաննա Առաքելյան
Վարչության անդամ

Վարչության նախագահի տեղակալ - Իրավական սպասարկման և ժամկետանց պարտավորությունների հետբերման գծով տնօրեն, «Յունիբանկ» ԲԲԸ-ի Վարչության անդամ, «Յունիլիզինգ» ՓԲԸ-ի և «ՌԵՍՈ» ՓԲԸ-ի Խորհրդի անդամ, ՀՀ բանկերի միությանը կից ֆինանսական արբիտրաժի արբիտր: ՀՀ բանկային համակարգում ակտիվ և արդյունավետ աշխատանքի համար պարգևատրվել է Հայաստանի բանկերի միության պատվոգրով:

Դավիթ Պետրոսյան
Վարչության անդամ

Կորպորատիվ բիզնեսի զարգացման և Տնտեսագիտությունների թեկնածու: Բանկային համակարգում աշխատանային փո որձն ավելի քան 15 տարի:

Տիգրան Բադանյան
Վարչության անդամ

Ռիսկերի կառավարման տնօրեն, Ֆինանսաբանակային համակարգում աշխատանքային փորձն ավելի քան 23 տարի:

Գուրգեն Ղուկասյան
Վարչության անդամ

Մանրածախ բիզնեսի զարգացման և վաճառքների տնօրեն: Մասնակցել է որակավորման բարձրացման մի շարք ծրագրերի, այդ թվում՝ USAID-ի և KfW բանկի:

Հայկ Սուվարյան
Ներքին աուդիտի տնօրեն

Տնտեսագիտական գիտությունների թեկնածու: Բանկային համակարգում աշխատանային փո որձն ավելի քան 13 տարի:

ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Կորպորատիվ կառավարման համակարգի ընդհանուր նկարագիրը

Բանկում գործում է լիարժեք կորպորատիվ կառավարման կառուցվածք, որը ներառում է Բաժնետերերի ընդհանուր ժողովը, Բանկի Խորհուրդը, Բանկի Վարչությունը, Ներքին աուդիտը, Խորհրդին կից Հանձնաժողովները, Վարչությանը կից Հանձնաժողովները, Վարկային կոմիտեն և Պահուստների կառավարման Կոմիտեն: Բաժնետերերի ընդհանուր ժողովը հանդիսանում է Բանկի կառավարման բարձրագույն մարմինը, կայացնում է որոշումներ Բանկի գործունեության հիմնական հարցերի վերաբերյալ: Բաժնետերերի ընդհանուր ժողովն անց է կացվում ամեն տարի: Խորհրդի որոշմամբ նաև կարող է գումարվել արտահերթ ժողով: Բաժնետերերի ընդհանուր ժողովի ամսաթիվը սահմանում է Խորհուրդը: Բանկը տեղեկացնում է բաժնետերերին Ընդհանուր ժողովի անցկացման մասին՝ Բանկի պաշտոնական կայքում հրապարակելով հաղորդագրություն ոչ ուշ, քան 15 օր առաջ Բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի անցկացման ամսաթվից և 30 օր առաջ Բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի անցկացման ամսաթվից: Բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի կողմից ընդունված որոշումները, ինչպես նաև քվեարկության արդյունքները նույն կարգով տեղեկացվում են բաժնետերերին:

Բանկի Խորհուրդը հանդիսանում է Բանկի կառավարման կոլեգիալ մարմինը, որը սահմանում է Բանկի գործունեության հիմնական ռազմավարական ուղղությունները երկարաժամկետ հեռանկարում, ինչպես նաև՝ ներքին վերահսկողության կազմա-կերպման մոտեցումները: Բանկի Խորհուրդը, իրականացնելով իր գործունեությունը, հաշվետու է Բաժնետերերի ընդհանուր ժողովին, գործում է Բանկի և բաժնետերերի շահերի համաձայն, ինչպես նաև ապահովում է բոլոր այլ շահագրգիռ անձանց շահերը և օրինական պահանջները:

Բանկի Վարչությունն իրականացնում է ընթացիկ, օպերացիոն գործունեության ղեկավարումը լիազորությունների շրջանակներում, որոնք սահմանված են ՀՀ օրենսդրությամբ և Բանկի կանոնադրությամբ: Վարչությունը հաշվետու է Բաժնետերերի ընդհանուր ժողովին և Բանկի Խորհրդին: Ներքին աուդիտն ունի անկախ կարգավիճակ, գործում է Խորհրդի անմիջական հսկողության ներքո: Իրականացնում է Բանկի ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության ստուգում և գնահատում:

ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

Բանկի Խորհուրդը հանդիսանում է Բանկի կառավարման կոլեգիալ մարմինը, բաղկացած է 7 անդամից, որից 4-ը հանդիսանում են անկախ: Այն սահմանում է Բանկի գործունեության հիմնական ռազմավարական ուղենիշները երկարաժամկետհեռանկարում, սահմանում է ներքին վերահսկողության կազմակերպան մոտեցումները:

Հանդիսանում է Բանկի կառավարման բարձրագույն մարմինը, կայացնում է որոշումներ Բանկի բաժնետերերին շահութաբաժիններ կատարելու վերաբերյալ, հաստատում է Բանկի կանոնադրական կապիտալում փոփոխությունները:

ԲԱՆԿԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
Սահմանում և Բանկի կադրային քաղաքականեության և անձնակազմի մոտիվացիոն պարգևատրումների ընդհանուր սկզբունքները և քաղաքականեությանը Հանձնաժողովը բաղկացած է 4 Խորհրդի անդամից (3-ը անկախ)

ԱՈՒԴԻՏԻ ԵՎ ՌԻՍԿԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
Ապահովում էռիսկերի կառավարման և պորատիվ կառավարման ներքին վերահսկողության համակարգերի արդյունավետության բարձրացումը: Հանձնաժողովը բաղկացած է 4 Խորհրդի անդամից (3-ը անկախ)

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ապահովում է նախնական ներդրումային նախագծի ևծրագրերի քննարկումը, ինչպես նաև Բանկի ներդրումային քաղաքականության բարելավումը: Հանձնաժողովը բաղկացած է 5 Խորհրդի անդամից (2-ը անկախ)

ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Սոցիալական պատասխանատվության սկզբունքներին համաձայն Յունիբանկը մշտապես ամենագործուն մասնակցությունն է ցուցաբերում երկրի հասարակական կյանքում՝ իր ուժերն ուղղորդելով ենթակառուցվածքների զարգացմանն ու նոր աշխատատեղերի ստեղծմանը: Յունիբանկը տնտեսական և սոցիալական ծրագրերի պատասխանատու մասնակից է: Բանկն ակտիվ մասնակցություն է ցուցաբերում բարեգործական և հովանավորչական ծրագրերում, որոնք ուղղված են կրթության, մշակույթի և սպորտի ոլորտների զարգացմանը, ինչպես նաև բնակչության ֆինանսական գրագիտության բարձրացմանը:

ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԷԹԻԿԱ

Բանկում փոխգործակցությունը կառուցված է անհատի հարգանքի և արդյունքին հասնելու հիման վրա՝ նպատակ ունենալով հաջող կերպով լուծելու մասնագիտական խնդիրները և պահպանելու կառուցողական հարաբերությունները անձնակազմում: Մենք աշխատում ենք համապատասխանել գործարար էթիկայի սկզբունքներին, պահպանելով գործող օրենքները, ինչպես նաև բանկում սահմանված նորմերն ու կանոնները:

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Բանկն իր գործունեության ընթացքում ձգտում է հետևել շրջակա միջավայրի պաշտպանության սկզբունքներին: Վարկավորման ծրագրերի իրականացման ժամանակ բանկը հաշվի է առնում շրջակա միջավայրի պաշտպանության ստանդարտների համապատասխանության փաստը և նախապատվություն է տալիս էկոլոգիապես մաքուր ապրանքների արտադրությանն ու ռեսուրսախնայող գործունեություն իրականացնող ծրագրերի վարկավորմանը: Բանկն իր գործունեության ընթացքում ձգտում է նվազագույնի հասցնել այն նախագծերի ֆինանսավորումը, որոնք կարող են բացասական ազդեցություն թողնել շրջակա միջավայրի վրա:



«Վաղվա օրվան թողեք միայն այն, ինչ դուք չեք
ցանկանում ավարտել մինչև Ձեր մահը
Գործողություն - դա էհիմնական բանալին հաջողության»

Պաբլո Պիկասո

ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ԿԱԴՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Բանկի կադրային քաղաքականությունն ուղղված է արդյունավետ և բարձր որակավորում ունեցող կադրային ներուժի ձևավորմանը, անձնակազմի ուսուցման համակարգի զարգացմանը, աշխատակիցների համար մոտիվացիոն համակարգի բարելավմանը, ինչպես նաև կորպորատիվ մշակույթի նորմերի պահպանմանը, որը ենթադրում է գործարար հաղորդակցության և սպասարկման ստանդարտների պահպանում:

Կադրային քաղաքականությունն ուղղված է անձնակազմի մանրակրկիտ ընտրությանն ու ուսուցմանը, ինչպես նաև բարձր որակավորում ունեցող կադրերի ձևավորմանը, որի շնորհիվ հնարավոր է ապահովել ծրագրված արդյունքները: Տվյալ քաղաքականությունն իրականացվում է բանկի կորպորատիվ շահերի շրջանակներում՝ առավել փորձառու մասնագետների ներգրավման, նախաձեռնող աշխատակիցների խրախուսման և առաջխաղացման միջոցով: Հատուկ ուշադրություն է դարձվում պրոֆեսիոնալ մակարդակի աճին և օպտիմալ վարչակազմակերպչական կառուցվածքի ձևավորմանը:

Ընտրության, թեստավորման և հարցազրույցների ընթացքում առանձնացվում են պատասխանատու, առաջադեմ և նպատակասլաց մասնագետներ, որոնք կիսում են բանկի արժեքները և պատրաստ են դրանք զարգացնել: Զբաղեցրած պաշտոնին համապատասխանության և որակավորման մակարդակի որոշման համար բանկը պարբերաբար անցկացնում է անձնակազմի ատեստավորում և ռոտացիաներ:

2018 թվականի աշխատանքի հիմնական ուղղություններն են՝

- բիզնես ստորաբաժանումների արդյունավետության բարձրացման նպատակով բանկի վարչակազմակերպական կառուցվածքի փոփոխությունը,
- համակարգված ուսուցման զարգացում ու աշխատակիցների որակավորման բարձրացումը,
- վերապատրաստման ծրագրերի իրականացում և Հայաստանի առաջադեմ ԲՈՒՀ-երից ուսանողների ներգրավումը:

2018թ-ին բանկի անձնակազմի թվաքանակը կազմել է 891:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԿԱՆԻՇ

Moody–s Investors Service միջազգային գործակալությունը բարձրացրել է Յունիբանկի վարկանիշը՝ սահմանելով B2 դրամով և արտարժույթով երկարաժամկետ ավանդների համար: Բազային վարկային գնահատականը /baseline credit assessment (BCA)/սահմանվել է b3, իսկ կոնտրագենտի ռիսկի գնահատականը /longterm Counterparty Risk Assessment (CR As-sessment)/՝ B2(cr)/NP(cr) մակարդակի վրա: Կանխատեսումը՝ կայուն:

ԹՂԹԱԿԻՑ ԲԱՆԿԵՐ

- CB UNISTREAM
- ALFA BANK
- BANK OF GEORGIA
- RAIFFEISEN INTERNATIONAL AG
- RAIFFEISENBANK MOSCOW
- TRANSSTROIBANK
- TRANSCAPITAL BANK